ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ թիվ 483-Ա, 484-Ա և սեպտեմբերի 20-ի թիվ 485-Ա որոշումների վերաբերյալ

1. ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 484-Ա որոշմամբ օտարվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի մակերեսը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23[1]-րդ կետին, համաձայն որի գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի դեպքում մեկ լոտով օտարվող հողամասի առավելագույն չափը չի կարող 20 հեկտարից ավելի լինել, իսկ նվազագույն չափը չի կարող պակաս լինել տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից, եթե համայնքի հողերի օգտագործման սխեմայով այլ չափ նախատեսված չէ։

2. ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 483-Ա և սեպտեմբերի 20-ի թիվ 485-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ